ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ РЕГИОН
ВОСКЕАТСКОЕ СЕЛЬСКОЕ
УПРАВЛЕНИЕ

N 01-20

«05» 02 2018թ.

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ. 5-29-35

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Ա . Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի կողմից 2018 թվականի հունվար ամսվա ընթացքում ընդունված որոշումը, առձակված կարգադրություններ չկան:

Առդիր՝ 1 թերթ:

Ոսկեհատ համայնքի
ղեկավար՝ Գ. Ներսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» հունվարի 2018 թ. թիվ 1-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի չորրորդ մասով, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912 –Ն որոշմամբ, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, շենքի տեխնիկական վիճակը բավարար է անվտանգ շահագործման համար, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Համբարձում Գևորգի Ներսիսյանի 2018 թվականի հունվարի 25–ի դիմումը:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի Բարեկամության 2/5-1 հասցեում գտնվող Ոսկեհատ համայնքին պատկանող 238 քմ հողատարածքը, (կառուցապատող Համբարձում Ներսիսյան) հողամասում ինքնակամ կառուցած 57,4 քմ արտաքին մակերեսով հասարակական ծածկոցը օրինականացնել համաձայն (Աստղիկ Մանուկյան) Ա/Ձ–ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը հասարակական ծածկոցի համար 109.864 դրամ է, իսկ հողամասի համար 345,668 դրամ է:
Վճարման ենթակա գումարը կազմում է 455.532(չորս հարյուր հիսունհինգ հազար հինգ հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ:

3.Հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ հողատարածքը դարձնել հասարակական կառուցապատման հողամաս:

4. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը60-օրյա ժամկետում վճարվի Ոսկեհատ համայնքի վարչական եկամուտների 900325184159 109.864, իսկ 900325184134 345,668 հաշվեհամարներին: Չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնելուց հետո երկամսյա ժամկետում կարող է բողոքարկել վարչական կարգով՝ Ոսկեհատ համայնքի ղեկավարին, կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր՝ Գ. Ներսիսյան

2018 թվականի 31 հունվարի

գ. Ոսկեհատ